

1560

3kn1
2-64

1917

2010

93/100
10

Յուշապատ. Գ.-Գ. Տեղ. Կուսակցության
Գրկիարաններ, բոլոր երկրների միասին.

Գ. ՁԻՆՈՎԵՒ

ՈՎԲԵՐ ԵՆ

ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ

12001

(Հարց ու պատասխանով)

Թարգմ. ԱԷ-ԳԱ

1917, Քիֆին.

Հրատարակ. Ս. Ունանիանի



3KPI
9-64

3 KPI

8-64

I

ՌՎՔԻՐ ԵՆ ԲՈՂՇԵՒԻԿՆԵՐԸ

Հարց: Ուր զնում ես, միայն մի
խօսք ես լսում՝ «Բողջեի, Բողջեի-
նեբը»: ՌՎՔԻՐ եմ բողջեիները. ինչու
եմ նրանց այդպէս անւանում: Ի՞նչ եմ
ցանկանում:

Պատասխան.— Բողջեիները,— բան-
ւորներ, զինւորներ, չքաւոր գիւղացի-
ներ և ծառայողներ են, մի խօսքով՝
քաղաքի և գիւղի աշխատւորներն են:
Նոքա միացել են և մի ընկերութիւն-
կուսակցութիւն առաջացրել: Այդ կու-
սակցութեան անունն է՝ Ռուսաստանի
Սոցիալիստիկական Բանւորական
Կուսակցութիւն: Մի ծաղկով զարուն
չի գայ, միայնակ մարդը ոչինչ չի
կարող անել, իսկ միանալով, մի կու-
սակցութիւն կազմելով՝ բանւորները,



[Handwritten scribble]

[Handwritten mark]

1443-83
80143-սե

զինւորները և գիւղացիները մեծ սյծ են դառնում: Բանւորական կուսակցութիւնը Ռուսաստանում քսան տարուց աւելի է, ինչ գոյութիւն ունի: 1903 թւին այդ կուսակցութիւնից անջատւեց նրա մի փոքրաթիւ ժառը (այստեղից առաջացաւ փոքրամասնական, Մենշեիկ անունը): Մենշեիկները աւելի ու աւելի հեռացան Բանւորական ընտանիքից և սկսեցին սիրաշահել, համաձայնութեան գալ հարուստների (բուրժուազիայի) հետ:

Բայց Բանւորական կուսակցութեան մեծամասնութիւնը (այստեղից առաջացաւ մեծամասնական, Բոլշեիկ անունը) հաւատարիմ մնաց բանւոր դասակարգին: Բոլշեիկները սկսած 1903 թւից աշխատում են յօգուտ բանւորների, զինւորների և գիւղացիների: Տարեց տարի կուսակցութեան շարքերը խաանում են ու բազմանում, այժմ կուսակցութեան անդամների թիւը հարիւր հազարներով է հաշոււմ: Պատերազմի ժամանակ Մեն-

շեիկները ենթարկեցին կապիտալիստներին, ընկան նրանց արգելցութեան տակ, նրանք սկսեցին կրկնել հարուստների ասածը՝ թէ պատերազմը ժողովրդին հարկաւոր բան է, որ այս պատերազմը արդարութեան և ազատութեան համար է: Բոլշեիկները հէնց պատերազմի առաջին օրւանից նրան հակառակ էին: Հաց, հացսուքիւն, ազատսուքիւն՝—հա թէ ինչ են ցանկանում բոլշեիկները ժողովրդի համար:

II.

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Է ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հարց. — Ի՞նչպէս են վերաբերում Բոլշեիկները ներկայ պատերազմին: Պատասխան. — Բոլշեիկներն ասում են՝ նախ և առաջ պէտք է իմանայ ինչի համար է մղոււմ պատերազմը: Այս պատերազմոււմ, Գերմանիան ուղոււմ է ձեռք ձգել Փոքր Ասիան,

Միջազեաքը, ընդհական ու ֆրանսիական Կոնգոն Աֆրիկայում, Պորտուգալական գաղութները, Կուբանգեան, Լեհաստանը: Փրանսիան ուզում է ձեռք ձգել Միբիան, Փոքր-Ասիայի մի մասը, Գերմանական կալածները Աֆրիկայում, յետ խլել էլլաս-Հոտարիկիան Գերմանիայից, օտար հողերի տիրանալ Հոնոսս գետի միւս ափին:

Աւստրիան ուզում է տիրանալ Ագրիատիկ ծովի արևելեան ափին գլուխող հողերը, իր իշխանութիւնը հաստատել սլաւոնական բոլոր ժողովուրդների վրայ, որոնք հեծում են Աւստրիական թագաւորների Հաբսբուրգեան ասն լծի տակ:

Անգլիան ուզում է յափշտակել Միջազեաքը, Փոքր-Ասիան, Արաբիան, իր ձեռքը ձգել ամբողջ Աֆրիկան:

Իսպիան յափշտակելու տեղեր է փնտրում Աֆրիկայում, ուզում է խլել Տրենտինոն, Տրիեստը, Իստրիան, Դալմացիան, Ալբանիան: Ռուսաստանը

պատերազմն սկսել է Կոստանդուպոլիսը, Գալիցիան, Պարսկաստանը ձեռք ձգելու նպատակով:

Այսպէս թէ այնպէս Թիւրքիային տիրանալ են ուզում բոլոր պատերազմող խոշոր պետութիւնների կապիտալիստները:

Այստեղ մի հարց է առաջանում հարկաւոր է արդեօք առև ժողովուրդին, այդ սեռակ պատերազմ: Բողոքիկներն ասում են՝ ոչ, հարկաւոր չէ, որևէ զիւղացուն հարկաւոր են ոչ թէ Պարսկաստանի, Տաճկաստանի կամ Գալիցիայի հողերը, այլ Մոսկուայի, Եարոսլաւի, Պոլտաւայի և Ռուսաստանի միւս նահանգների հողերը: Ես պէտք է ետ խլի կալածատէրերից այն հողերը, որ զարեւ շարունակ իր քրտինքով թռչել է առև զիւղացին և ոչ թէ ընկնել տաճկական և գալիցիական զիւղացիներին պատկանող հողերի ետևից:

—Ո՞վ է սկսել պատերազմը: Պատերազմող գլխաւոր երկիրների բանկիր-

ներն ու թագաւորները:

—Ո՞վ է վճռել որ Ռուսաստանը մասնակցի այս պատերազմին:—Նախկին ցար Նիկոլայ Արիւնտաբ և նրա կամակատարները՝ Գրիշկա Բասպուտինը, Սուխովիչնովը, Խվոստովը:

Իսկ մենք շարունակում ենք ցարի սկսած պատերազմը. մենք նրա համար ժողովրդական փողմից ծախսում ենք միլիոններ, մենք նրան զոհում ենք հարազատ ու միլիոնաւոր կեանքներ, մենք քայքայում ենք երկիրը և կործանում այնպիսի աշխատանքով ու թանգ գնով ձեռք բերած ազատութիւնը:

III.

ԻՆՉՊԷՍ ՎԵՐՁ ՏԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Հարց.—Իայց ի՞նչպէս վերջացնել պատերազմը. էէնց վեր կենալ ու զժուրս գալ խրամատներէց, աւինները խրել գետին և ցրւել:

Պատասխան.—Ո՞չ. այդ ձևով պա-

տերազմը չի վերջանայ: Ներկայ պատերազմին մասնակցում են մօտ տասնուհինգ պետութիւն: Եթէ մի պետութիւն կուից հեռանայ, մնացած տասնուչորսը կշարունակեն: Պէտք է այսպէս վարել. պէտք է տապալել այն թագաւորներին, բանկիրներին, որոնք սկսել են պատերազմը, առանց իրենց ժողովրդին հարցնելու և նրանց կամքի հակառակ: Պէտք է բոլոր երկիրները բանւորները, զինւորները և զիւզացիները միանան բոլոր, երկիրների կապիտալիստների դէմ—և միայն այդ ձևով վերջ կտրուի պատերազմին:

Հարց.—Չէ որ մենք մեր թագաւորին գահընկեց արինք. նշանակում է մենք մեր գործը վերջացրել ենք:

Պատասխան.—Ո՞չ. մեր արածը գործի փոքրիկ սկիզբն է. Նիկոլայ թագաւորին ապալիցինք, բայց թագաւոր կապիտալը մնացել է: Ո՞վ է այժմ մեր երկրի կառավարիչը.—կապիտալը: Ո՞վ է մեր արտաքին գործերի մինտարը—միլիոնատէր Տերեչչին

կօն: Իսկ նրանից առաջ կարևածատէ-
րերի մի ուրիշ կամուկատարն էր—Մի-
լիւկովը: Մրանք պատերազմին վերջ
տալ չեն սւղում: Ռուս կարևածատէ-
րերն ու կապիտալիստները պատե-
րազմից մեծամեծ օգուտներ են ստա-
նում, էլ ինչի՞ վերջ կտան պատերազ-
մին: Նիկիտայցարը պայմանաւորել է
անգլիական, ֆրանսիական, իտալական
կապիտալիստների հետ, թէ՛ արի մի-
ասին թալանենք թոյլ ժողովուրդնե-
րին: Թագաւորը գաղտնի պայմաններ
է հապել կապիտալիստների հետ, որ
եղած թալանը իրար մէջ բաժանեն:

Ճիշտ է, մենք այժմ թագաւոր չու-
նենք, բայց և այնպէս գաղտնի պայ-
մանագրերը դեռ իրանց ոյժը պահում
են: Ռուսական կապիտալիստները ոչ
ուզում են այն պայմանագրերը հրատա-
րակել՝ ժողովրդին նրանց հետ ծանօթա-
ցնելու համար և ոչ էլ ոչնչացնում են:
Նոյնն է Աւստրիայում, նոյնն է նաև
Գերմանիայում: Այնտեղ աէր ու անօ-
րէն է դահիճ—Վրիճիւմը և գերմանու-

կտն կապիտալիստների ու կարևածա-
տէրերի խմբակը, որոնք նոյնպէս ու-
զում են կողոպտել ուրիշ ժողովուրդ-
ներին: Այնտեղի բանուորները, զին-
ւորները և զիւղացիներն էլ են կշտա-
ցել պատերազմից: Եւ որքան համար-
ձակ լինի մեր կուրը սեփական կապի-
տալիստների դէմ, այնքան վճռական
դիրք կըռնեն Գերմանիայում պատե-
րազմի դէմ:

Հարց.—Բայց ի՞նչ անենք հիմա, եէնց
այս բոլորին, որ շուտով հաշտութիւն
ձեռք բերենք:

Պատասխան.—Պէտք է պահանջենք
գաղտնի պայմանագրերի հրապարակ
հանելը, այն պայմանագրերի, որ կա-
պել է ցարը. պէտք է, որ այդ պայմա-
նագրերը ոչնչանան և նզովքի արժա-
նանան: Թող բոլորն էլ իմանան, որ
մենք ոչ ոքի թալանել չենք ուզում:
Թող ամբողջ աշխարհը տեսնի, որ սու-
սական յեղափոխութիւնը պատաստ-
տում, ոչնչացնում է ցարի, թագաւոր-
ների ու բանկիրների կապած պայմա-

նազբերը: Պէտք է, որ սուսական կա-
ռավարութիւնը բաց ու համարձակ զի.
նադազար յայտարարի բոլոր պատե-
րազմող պետութիւններին և առաջարկի
անմիջական, շուտափոյթ հաշտութիւն:
Թող մարզկային կոտորածը դադարի
գոնէ մի երկու ամսով և թող ժողո-
վուրդները ձեռք զարկին իսկական
գեմտկրատիկ հաշտութեան պայման-
ները մշակելու:

Հարց.— Իսկ բուլղերկները դիմոկրա-
տիկ հաշտութիւն ասելով ինչ են հաս-
կանում. մթթէ միենոյնը չէ. հաշտու-
թիւնը հաշտութիւն է, ինչ տեսակ
ուզում է լինի:

Պատասխան.— Ոչ, միենոյնը չէ:
Ահա ձեզ մի օրինակ. ներկայումս
անգլիական կապիտալիստներն աշխա-
տում են համաձայնութեան գալ, որ
այնպէս անեն, այնպիսի հաշտու-
թիւն կնքեն, որ իրանք չվնասուին. նը-
բանք ուզում են հաշտեն մեր հաշ-
ւին: Եթէ առևտուրը գլուխ եկաւ, ա-
պա մեր շորերն էլ կը հաճեն, մեր

գլուխը գրաւ կը դնեն:

Բուլղերկները այնտեսակ հաշտութիւն
են ուզում, որ բոլոր ազգերը, մեծ թէ
փոքր, ռուս, լեհ, չեխ, հայ, վրացի,
չինացի, իրլանդացի, նեգր—բոլորն էլ
իբանց վիճակը կարողանան տնօրինել
(ազգերի ինքնորոշում): Այդ ազգերը
անեն այն՝ ինչ որ ցանկանան. ուզում
են, թող իրենց ստանձին պետութիւնն
առաջացնեն, ուզում են միանան այս
կամ այն պետութեանը, առանց ճնշու-
մի, առանց ստիպելու:

Ահա այս տեսակ հաշտութիւնն է,
որ կոչւում է գեմտկրատական. միւս
բոլոր տեսակ հաշտութիւնները աւա-
զակային հաշտութիւն են. որովհետեւ
շատ չի անցնի, մի քանի տարուց յետոյ
նորեց կը վերսկսւի այնպիսի մի պա-
տերազմ, ինչպիսին մենք այժմ տկա-
նառես ենք:

Ստում կն նրանք, որոնք ասում են
թէ այս վերջին պատերազմն է. եթէ
բանւորները, զինւորները և զիւղա-
ցիները չտապաւեն, զէն չձգեն կառի-

տալիսանների ու կալաճաճաճիների լուծը, ապա նոր պատերազմները, նոր կոտորածներն անխուսափելի են: Ով ասում է «կորչի պատերազմը», նա պէտք է աւելացնի՝ «կորչեն կապիտալիստները»:

IV ՀՈՂԸ

Հարց.—Ի՞նչպէս պէտք է վարւել հողի հետ, այդ ժամին բուրձիկները թնչ կարծիքի են:

Պատասխան.—Բուրձիկները ուզում են այնպէս անել, որ բոլոր կալաճաճաճի-րական հողերը, բոլոր թաղաւորական, թաղաւորական ցեղին պատկանող (աւղելի) և վանքապատկան հողերը, խոշոր սեփականատէքերի բոլոր արօտատեղիներն ու անասանները առանց վճարի անցնեն ժողովրդի ձեռքը, զիւղացիութեան ձեռքը, այն՝ պետութեան սեփականութիւնը դառնայ, որի գլուխ են հանդնած կամ կանգնելու են բանւորները, զինւորներն ու զիւղացիները:

Հարց.—Սպա թնչպէս վարւել այն

մանր զիւղացիների հետ, որոնք ունեն, օրինակի համար՝ 5 կամ տասն դեսեատին հող, կամ թնչպէս պէտք է վարւել այն աշխատւոր կազակի հետ, որ մի փոքր անտեսութեան տէր է. նրանցից էլ պէտք է խլել հողը:

Պատասխան.—Ո՛չ, թէ սլ, թնչպէս և սւժը պիտի առ կողը մշակելու, դրա վճիռը ամենից լաւ զիւղացիները կաան: Հողային կոթիւններում գլխաւոր ձայնը պատկանում է զիւղացիներին: Գիւղացիները իրենց աչքը ըօւչեն ուղի, իրենց վնաս չեն տայ: Բանւորներն էլ զիւղացիներին վնասել չեն ցանկանայ: Իսկ թէ թնչպէս օգտւել հողից, թնչպէս միացնել այդ հողերի անտեսութիւնը զիւղացիների այժմեան հողերի հետ, այդ կվճուի ինքը ժողովուրդը և ամենից առաջ զիւղացիութիւնը:

Հարց.—Բայց թնչ տարբերութիւն, զանազանութիւն կայ բուրձիկներին և էսերների (սոցիալիստ-յիղափոխական-

ների) միջև հողի ժառանգ, ՄԻՔԷ Կուր-
ները հողի ու ազատութեան պաշտ-
պաններ կամ կողմակիցներ չեն:

Պատահաւան.— Այժ, սոցիալիստ յեղա-
փոխականները երկար ժամանակ կըս-
ւել են հողի համար: Եւ շատ քաջաբի,
անվեհեր կուտղներ է աւել նրանց
կուսակցութիւնը այդ գործի համար.
Քայց այժմ այդ կուսակցութիւնը,
քացի նրա ձախակողմեան մասից,
հրաժարւել է իր առաջայ նպատակ-
ներէրց: Մարտ ամսից, այն օրից, երբ
դէն շարտեցինք ցարին, Կսէրներ
կուսակցութեան մէջ մտել են շատ
„մարտի“ Կսէրներ, մարդիկ, որոնց
սոցիալիստ դասնալը մի քանի ամիս
է: Դրանք այն տեսակ մարդիկ
են, որ ուզում են բուրժուա-
զիայի հետ չկուել, ուզում են նրա
հետ Վեժաձայնութեան գալ: Բայց
ասացէք խնդրեմ, որ կարածատէրը
ինքնայօժար կամքով իր հողը կտայ
գիւղացիներին, Արդէն ութ ամիս է
անցել յեղափոխութիւնից, իսկ Կուր-

ները շարունակ ձանձրացնում են գիւ-
ղացիներին, ասելով թէ՛ ձեռք մի առք
կարածատէրերի հողերին, սպասեցէք
չի՞նտալիք ժողովին: Իսկ երբ գիւղա-
ցիները համբերութիւնը հասնում է և
էլ չեն սպասում, այն ժամանակ սո-
ցիալիստ բեվոյթեցիտները ձերբա-
կալում են գիւղացիներին, հողային
կոմիտէները անդամներին:

Է՛հ, շատ վատ օրերի ենք հասել:
Ահա ձեզ մինխտը Կե՛հնակին սոցիա-
լիստ յեղափոխական, անհ ձեզ մինխ-
տը Աւհտեանիւր—նոյնպէս: Զէ որ
հէնց այս սոցիալիստ յեղափոխական-
ներն էին որ հրամաններ էին արձա-
կում գիւղացիներին, հողային կոմի-
տէները անդամներին ձերբակալելու,
բանա նստացնելու:

Ուղիղը խօսեմք, չէ որ վաղուց է
ասած, թէ՛ սոչ ամենքը, ով որ Աստ-
ւած, Աստուած ասի, կարող է արքա-
յութիւն ստանալ: Ասին մի՛ ճեղք
ու ազատութեան համար: Ասին մի՛ ճեղք
կապիւն, հողի ու ազատութեան համար

1993-18



չի կուում: Կուսակցութիւններ կան, որոնք ստուժ են՝ չմենք հողի ու ազատութեան՝ կողմակից ենք, բայց իսկապէս ճկունաժամէրբի ու բուրժուաների՝ կողմակիցներ են:

Հարց. — Բայց զուցէ ճէնց Հիմնագիր ժողովում էսէրները պէտք է պաշտպանեն հոգն ու ազատութիւնը:

Պատասխան. — Քէ ինչ կլինի այդ ոչ որ իմանալ չի կարող: Կայրենք, կանսնենք: Բայց կուսակցութիւնների մասին կարծիք են յայտնում ոչ թէ նրանց խօսքերի, այլ գործերի հիման վրայ:

Նրանք, որոնք երէկ հրամաններ էին արձակում գիւղացիներին ձերքակալիլու մասին և եզրայրանում էին կալուածատերերի հետ, հազիւ թէ վաղ մինչև վերջը կուեն հողի համար: Չպէտք է կարծել, որ եթէ էսէները գիւղացիներին առաջարկում էին սպասել, այդ բանը կարգապահութեան համար էին անում: Ո՛չ, այդպէս չէ. էսէները չցանկանալով խզել իրենց

կապերը կապիտալիստների հետ, ուզում էին հարցը, հողի հարցը այնպէս լուծել, որ թէ գայլը կշտանայ և թէ ոչ-խարը ողջ մնայ: Բայց այդ սեսակ լուծում լինել չի կարող: Ճէնց յեղափոխութեան սկզբից կապիտալիստները ստուժ էին՝ «պէտք է առ այժմ սպասել, հողի հարցը պէտք է չլուծել. թնգ Հիմնագիր ժողովը լուծի»: Իսկ իրենք ստեն կերպ ձգձգում և յետաձգում էին Հիմնագիր ժողովը: Կէր-նեքն էլ պատասխանում էին՝ «Մյն, այն, այդպէս է, համաձայն ենք»: Իրենց այդներով հողի հարցը թաղիցին. ընչ Պիոց որ յեղափոխութիւնն էլ թաղէին: Եւ հաստատ կարող ենք ասել, որ Հիմնագիր ժողովում էսէրները (և մենչիկինները) կաշխատեն շուրա քը-նալ, համաձայնել բուրժուազրայի հետ: Իսկ սրանից գիւղացիութիւնը ոչ մի օգուտ չի ստանայ: Եւ եթէ պատահի, գիւղացիները դժգոհեն, էսէր Աւիտեանիներն ու Կերենսկիները նորից ինչէր ու կազակ կուղարկեն

գիւղացիներին զնստաններումս փր-
տացնելու իբր խոտվարարներն:

Հարց.— Եթէ այդպէս է, կունենան
արդեօք գիւղացիները այնքան ոյժ,
որ յաղթեն կալւածատէրերին, և ո՞վ
է օգնութեան նստնելու գիւղացինե-
րին:

Պատասխան.— Գիւղացիներն ունեն
մի խոշոր, եզօր ու հաւատարիմ դաշ-
նակից—դա բանւորութիւնն է: Բան
ւորները նոյնքան շահագրգռած են
կալւածատէրերի զէմ կուելու մէջ, որ-
քան և գիւղացիները: Նրանց վրայ
միշտ կտրելի է յոյս դնել: Բանւոր-
ներն արդէն 25 տարի է կուում են
Թագաւորների, կալւածատէրերի ու
կապիտալիստների զէմ: Բանւորներն
այժմ մեծ ոյժ են, նրանք մօտ 10 մի-
լիօն են Ռուսաստանում: Նրանք միա-
ցած են, նրանք պարտաւ են կուե-
լու: Նրանց կուսակցութիւնն է բոլ-
րիկների կուսակցութիւնն:

Երբ չքաւոր գիւղացիութիւնը միա-
նայ բանւորութեանը, երբ գիւղացիու-

թիւնը վստահանայ բանւորների զե-
կավարութեանը, երբ նրանք օգնու-
թեան հասնեն, աշակցան բանւորական
կուսակցութեանը և բանւորական Խոր-
հուրդներին—էլ աշխարհի ոչ մի ոյժ
չի կարող յաղթել նրանց:

Կալւածատէրերի, գիւղական դօր-
բանների, հարուստ կապիտալիստների.
զէմ կուելու է կանչում գիւղացինե-
րին մեր բոլշևիկների կուսակցութիւնը:

Հող—առանց վճարի—տե՛ս ինչ են
ուզում բոլշևիկները:

Անարգ ու խաբիբաբ մարդիկ կան,
որոնք դնում են գիւղը, գիւղացիներին
մոլորեցնում, պատմելով թէ բոլշևիկ-
ները քրուքժուաներ են, որ իբր թէ
մեծամասնականները — բոլշևիկները
չէնց դրա համար են այդպէս կոչւում:
Այդ խաբէութիւն է: Պարէլութիւն և զբը-
պարտութիւն է և այն, իբր թէ բոլշևիկ-
ները գերմանական ցտիմներ են, որ
իբր թէ նրանք ուզում են Ռուսաս-
տանը, սուսական եողը շինելովին տալ
կայրն, կայրն: Այդ բոլորը սուտ ու

ասոր խօսքեր են: Ճնշողները մեզ հետ
ուղից ճանապարհով կուելու անդօր
լինելով, ծուռն ու մուռ ճանապարհ-
ների են դիմում, մեզ զբաբառում:
Քաղաքներում բանւորներն արդէն հաս-
կացել են բանի էութիւնը. նրանք կա-
րողանում են սեր սպիտակից զանա-
զանել և շատ լաւ դիտեն այդ սոււա
լուրերի նպատակն ու արժէքը:

Գիւղերում էլ շուտով չեն հաւատայ:
Ամեն ինչ կանցնի — ճշմարտութիւնը
կը մնայ: Իսկ ճշմարտութիւնը, իս-
կութիւնն այն է, որ չքաւոր գիւղա-
ցիութեան, գիւղական մշակների, ուղ-
այարների, կալածատէրերի լծի տակ
տնքացողների, միշտ աշխատողների և
կիսաքաղձ մնացողների իսկական բա-
րեկամները բոլշեիկներն են:

Կալածատէրերի դէմ հողի համար
մինչև վերջը կռուողները բոլշեիկներն
են: Եւ դրա համար նրանց՝ բոլշեիկ-
ներին ամենից շատ առում են կալ-
ւածատէրերը:

Ի՞նչ փոյթ:

Զէ որ գիւղացիները ամենից շատ
կհաւատան բոլշեիկներին:

V.

Ո՞ՒՄՆ Է ՊԱՏԿԱԼՆՈՒՄ ԻՃԵԱԼՆՈՒ-
ԹԻՒՆԸ

Հարց.— Իսկ, բոլշեիկների կարծիքով,
ինչպէս պիտի կաղմակերպուի իշխանու-
թիւնը երկրում: Ինչով են տարբեր-
ւում նրանք միւս կուսակցութիւննե-
րէն:

Պատասխան.— Ով ուզում է այդ
հարցերի պատասխանը գտնել կամ
ստանալ, նա պէտք է յետ նայէ: յիշէ
անցեալը, յիշափութեան ութ ամի-
սը: Իսկ այդ ժամանակամիջոցը ա՛ն-
թէ ինչպէս անցաւ:

Թաղաւորին տապալեցին բանւոր
ներն ու գիւղացիները. նրանք կուում
էին ցարի փարաւօնների (ոստիկանների)
հետ ժայլաբաղաքի փողոցներում: Նը-
րանք իրենց արիւնն էին թափում ա-

դատութեան համար. բայց իշխանութիւնը ձեռք ձգեցի՝ կապիտալիստներն ու կալւածատէրերը:

Առաջին ժամանակաւոր Կառավարութիւնը բաղկացած էր զուտ կալւածատէրերից ու միլիտանտներէից. Կօօփ, Իուչկով, Տերեշնիկո, Կոնովալով, Միլիկով և ուրիշներ. նրանց մէջ մտել էր միայն իրեն սոցիալիստ համարող մի մարդ — Կերենսկին: Բայց սա էլ հէնց որ մինիստր դարձաւ, մոռացաւ, բոլորովին մոռացաւ ժողովրդի շահերի մասին մտածել. կուտւմ էին բանւորներն ու զինւորները, իսկ իշխանութիւնը ձեռք էր ձգել կապիտալիստների մի խումբու Պատճառն այն էր, որ բանւորներն ու զինւորները զեւտ միտք չէին, իսկ կապիտալիստները զարծում էին կապիտալիստական օգուտեցին այն բանից, որ կալւածատիրական Պետական Իրաւայում իրանք մեծամասնութիւն են և միւս կողմից սրանց աջակցեցին անգլիական ու Ֆրանսիական կապիտալիստները:

Այսպէս շարունակեց երկու ամիս. երբ բանւորներն ու զինւորները համոզեցին, որ նոր ժամանակաւոր Կառավարութիւնը ձգձգում է պատերազմը, երկիրը կապիտալիստներին զոն է դարձնում, — նրանք յուզեցին: Զորացիներն ու բանւորները փողոց դուրս եկան: Այն ժամանակ կապիտալիստները նոր խորամանկութեան գիմեցին: Նրանք մինիստրական կամիի մէջ 5 „սոցիալիստ“ մտցրին էսէրներէից ու մենշեիկներէից: Ժողովուրդը հաւատաց, որ այսուհետեւ էլ հինը չի կրօնւելու, որ ժամանակաւոր Կառավարութիւնը պաշտպանելու է շոտեհորների շահերը և վերջ է տալու պատերազմին: Բայց հակառակը զուրո եկաւ:

Կսէրներն ու մենշեիկները սկսեցին կապիտալիստների նապած եղանակով պարել, նրանց խմորին Զուր ամելու Պատերազմը շարունակւում էր: Կապիտալիստները առաջաւոր նման թալանում էին երկիրը՝ միլիտանտ աշխատելով: Երկիրը աւելի ու աւելի էր

քայքայում: Ոչ հաց կար, ոչ ապրանք: Իսկ „սոցիալիստ“ մինիստրները միայն մի բան զիտէին, այն որ՝ նրանք չհանգստացնում էին բանւորներին ու ղինւորներին, ասելով թէ՛ սպասեցէք... դարուն է գալու:

Յուլիսի սկզբին բանւորներն ու ղինւորները Պետրոգրադում, երբ ժամանակաւոր Կառավարութիւնից իրենց յոյսը կտրեցին, նորից փողոց դուրս եկան, պահանջելով, որ իշխանութիւնը յանձնւի Բանւորական, Ձինւորական և Ծիւղացիական Խորհուրդներին: Բանւորներին ու նաւաստիներին հրացանազարկ արին: Չորքի զնդերի ըմբոստմասերը զանազան տեղ փոխադրեցին. հազարաւոր յեղափոխականների բանտ նստացրին: Գաշարողական դրութիւն մտցրին: Փակեցին մի կուսակցութեան „Սրաքս“ թերթը, սպանեցին շատ բոլշեիկներ: Ռազմաճակատում մահան պատիժ մտցրին. ճակատում գործող ղինւորական կոմիտէները ցրուեցին: Ամբողջ բանակը ցարի գեներ-

բալների խառութիւններին ու կամայականութիւններին ենթարկեցին. զորքի բաղբը յանձնեցին Կորնիլովներին:

Մենշեիկները ու էսէրների միջեց մի քանիսը նոր մինիստր դարձան, բանակով աւելացան ժամանակաւոր Կառավարութեան մէջ. բայց հէնց ներանը էին, որ գոհունակութիւն էին յայտնում եղած խառութիւնների մասին, այն խառութիւնների, որոնք ցարի իշխանութեան ամենավատ ժամանակներն էին յիշեցնում:

Բանն այնտեղ հասաւ, որ Կորնիլովն ու իր բարեկամները Ռիգա բաղաքը դերձանացիներին յանձնեցին: Իսկ յետոյ, Կորնիլովը զորքի գլուխն անցած արշաւեց դէպի Պետրոգրադ Բանւորական և Ձինւորական խորհուրդները ցրելու, յեղափոխութիւնը խեղդելու և թաղաւորի, ցարի իշխանութիւնը վերականգնելու: Բողէաբար էսէրներն ու մենշեիկները սթափուեցին, նրանք օդնեցին բանւորներին և վերջ աւին Կորնիլովի աղաւաւմբութեանը: Բայց

շուտով սկսեցին իրենց հին երգը—
հին ճամփով գնալ: Նրանք դաշն կա-
պեցին բուրժուազիայի եւս և կապի-
տալիստաներից, կալաթառեւերից, մե-
շիկիներից և էսէրներից կոտավարու-
թիւն կազմեցին և սկսեցին երկիրը
կործանել:

Ահա այն օրւանից մենք նորից հին,
կոտրած տաշտակի առաջ ենք կանգ-
նած. գերթանացիք մտանում են Պե-
րոպրազին: Սովը զարգանում է, քա-
ղաքներում հաց չկայ, գիւղերում ոչ
կօշիկ է գտնուում, ոչ մեխ, ոչ շաքար,
ոչ նալ, ոչ դոթան և ոչ էլ չիթ: Ա-
մեն ինչ պատերազմ է կրանում: Զօ-
քը քաղցած է և ախլոք հրանդու-
թիւնները աւելի սարսափելի են դա-
նում: Պետական պարտքերը աճում
են. կապիտալիստները հսկայական
փողեր են վաստակում և իրենց բէֆը
քաշում: Եւ վերջ չկայ այս անասնման
սարսափներին:

Բողոքները հենց յնդափոխութեան
սկզբից առում էին, որ իշխանութիւնը

մի խումբ հարուստների ձեռքից անց-
նելու է բանւորներին, դիւզացիներին
և դիււորներին: Բանւորներն ամբողջ
Ռուսաստանում խորհուրդներ կազմե-
ցին (բանւորական պատգամաւորների
խորհուրդներ): Զինւորները—գինւորա-
կան պատգամաւորների խորհուրդներ
կազմեցին, իսկ գիւղացիները՝ գիւղա-
ցիական պատգամաւորների խորհուրդ-
ներ: Ահա թէ ում ձեռքն է ընկնելու
իշխանութիւնը:

Ամբողջ իշխանութիւնը խորհուրդ-
ներին—շարունակ գնդում էին բոլ-
շիկիները. դրա համար նրանց բանա
էին նստեցնում, փակում նրանց թեր-
թերը, նրանց ժողովրդի թշնամի յայ-
տաբարում, սպանում և բռնութիւն-
ների ենթարկում—ճիշտ այնպէս, ինչ-
պէս ցարի ժամանակ:

Բայց այդ էլ չօգնեց. ժողովուրդը
աւելի ու աւելի համոզում էր, որ
մենք բողոքիկներն իրաւացի ենք.
Մտակայում, Պեարոզքայում, Օդես-
սայում, Խարկովում, Սարատովում,

Ուրաւում, Կովկասում, ամեն տեղ
բանւորներն ու զինւորները անցան
մեր կողմը: Եկարչի բուրժուակաների և
կալւածատէրերի հետ կապած դաշնո
կողը անցնում է երկրի մի ծայրից
միւսը: Նա արձագանք կը դանի և
Հիմնադիր ժողովում—եթէ միայն գու-
ժարի:

Խորհուրդները նախու են և Հիմնա-
դիր ժողովի ժամանակ. առանց նրան
յեղափոխական իշխանութիւնը յինա-
բուն չի ունենայ:

Բուրժուազիայից ու կալւածատէրե-
րից կտրուել իսկական, խորհուրդնե-
րին յնւած ժողովրդական հասարա-
կապեաութիւն ստեղծել, ամբողջ իշ-
խանութեան ընտրութիւն, ստիկա-
նութեան միանգամայն վերացում,
կապիտալիստների սանձահարում,
բանւորների, զինւորների և շրջաւոր
շիւղացիների կառավարութեան օտեղ-
ծումն—անա թէ թոչ բանի են ձրգ-
տում բոլրիկները:

Նրանք ժողովրդի համար ուզում են՝

Հ ա ն ջ, հ ա շ ա ու լ թ իւ ն,
հ ո ղ, ա զ ա տ ու լ թ իւ ն:

25-

~~1911-12-13~~

2013

« Ազգային գրադարան



1380

NL0034980

